«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

# Քննական աշխատանք
2024-2025
## Հայոց լեզու (9-րդ դասարան)

**Անուն Ազգանուն** ___________________

**Դպրոց** ______________ **Դասարան** ______________

**Հրահանգներ.**

1.Գրի՛ր միայն կապույտ գրիչով:
2.Մի՛ օգտագործիր մատիտ և սպիտակեցնող կամ ջնջող նյութ:
3.Ուշադի՛ր կարդա առաջադրանքների պահանջները:
4. Պահպանի՛ր ակադեմիական ազնվություն:

**Առաջադրանքի տևողությունը**՝ _90___ րոպե:

| | |
|---|---|
| Սանի կողմից ստացած ընդհանուր միավորները | |
| Վերջնական գնահատականը /20 միավորանոց համակարգ (50:2.5=20)/ | |
| Ստուգողի ազգանունը և ստորագրությունը | |
| Առարկայական հանձնաժողովի նախագահի ստորագրությունը | |

1. **Ըստ անհրաժեշտության՝ լրացրո՛ւ բաց թողնված տառերը և կետադրի՛ր (21-1, -0,5):**

1.Մի օր ծերությունը անկոչ հյուրի նման անցանկալի ու ճշմարտության պես դաժան ներս մտավ դռնից և նկարչի մար…կային ցավերից տառապած սիրտն անհանգիստ թպ…տաց որովհետ… հասկացավ որ ժամանակը ցավոք թռչում է աննկատ:

2.Վեր…րեց ձեռնափայտն ու քայլերն անշտապ ու……եց քարտաշ ընկերո… տան կողմը վաղուց չէին հանդիպել: 3.Բացօ…յա պատ…գամբում ծղոտից հյուսած աթոռակին նստել էր ծեր քարտաշը քաղաքը կառուցող վարպետը և դեմքից ճառագող բարությամբ ու…եկցում էր անցուդար… անող մար…կանց: 4.Նկարիչն ակնածանքով խոնար…եց գլուխն ու նստեց նրա կողքին.

5. —Ար…են քանի տարի է՝ մենք ընկերներ ենք ու շատ բան գիտենք թե քարի թե մար…կային սրտի մասին: 6. Տարբեր են մար…կային հո…իները մեկինը ջինջ է ինչպես ականակի… աղ…յուրը մյուսինը նուր… է ու կայծկլտուն ինչպես սուտակը ե.….րրդինը կարծր է ինչպես ալմաստը: 7.Գիտեմ կան և ուրիշները որ չեչաքարի նման դատարկ են ու խոր…ուբորդ: 8. Ասա ինձ վարպետ թե ինչ քարից է իմ սիրտը:

9. Քարտաշը մի ակ…նթարթ մտածեց դողդոջուն մատներով վառեց ծխամորճը խոր ակնակապի…ների միջից մռայլորեն նայեց նկարչին ու ասաց.

10.— Քո սիրտը տուֆից է: 11. Տուֆն արևի կենսառատ շողերն ամբարում է իր մեջ ու մար…կանց անսպառ ջերմություն տալիս: 12.Բայց այն հեշտ խոցելի է փափուկ ու փխրուն և կյանքի բոլոր հարվածներն ու տվայտանքներն իրենց կնիքն են թողնում նրա վրա:

13. Նրանք երկար ու անբա…բառ նայեցին տուֆակերտ քաղաքին որն իր մե… էր ամփոփել իրեն արարողների քարտաշների ու նկարիչների բյուրավոր խոցված սրտերը:

2. **Տեքստից դո՛ւրս գրիր երկու մակբայ, որոշի՛ր տեսակը(2-0,5):**

____________________________________________________________

____________________________________________________________

________________________________________________________

3. **Ի՞նչ շաղկապներ են գործածված տեքստի 1-ին նախադասության մեջ, դո՛ւրս գրիր, նշի՛ր տեսակը (2-0,5) :**

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________

4. Տեքստից գտի՛ր և դո՛ւրս գրիր հետևյալ բառերի հոմանիշները (4-05):

Դժխեմ–
Գավազան–
Հարգանք–
Վճիտ–
Պինդ–
Անհարթ–
Տանջանք–
Դրոշմ–

5. Դո՛ւրս գրիր տեքստի 12-րդ նախադասության ենթակաները, նշի՛ր՝ ինչով են արտահայտված(3-0,5):

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________

6. Դո՛ւրս գրիր տեքստի 7-րդ նախադասության ստորոգյալները, նշի՛ր տեսակները(4-1):

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________

7. Տեքստի 1-ին նախադասության մեջ գոյականական անդամի լրացումներից որո՞նք են գործածված(2-1):

8. Տեքստից դո՛ւրս գրիր 1 կապ, նշի՛ր տեսակը, ևս մեկն էլ դո՛ւ գրիր, նշի՛ր տեսակը (2-05)։

9. Տեքստից դո՛ւրս գրիր 1 վերաբերական , նշի՛ր տեսակը, ևս մեկն էլ դո՛ւ գրիր, նշի՛ր տեսակը (2-05)։

10. Գրի՛ր շարադրություն՝ «Ովքե՞ր են ստեղծում մնայուն արժեքներ» վերնագրով( ծավալը՝ 1- էջ) 8 -3(միտք) -5(քեր.)-05, 0,25))։

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

_________